ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» հունիսի 2019 թվականի N: 249-ա ք.Գյումրի

«ՄԱՐԱԼԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի դրույթներով, հիմք ընդունելով թիվ ՎԴ5/0089/05/19 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի մայիսի 31-ին տրված կատարողական թերթի հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության Շիրակի մարզային բաժնի Արթիկի բաժանմունքի հարկադիր կատարող Ա.Հակոբյանի 2019 թվականի հունիսի 4-ի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» և «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2019 թվականի հունիսի 11-ին կայանալիք մրցույթի անցկացումը կասեցնել՝ մինչև տվյալ գործով կայացվող վերջնական դատական ակտի օրինական ուժ ստանալը:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է